# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Արմինե Պողոսի Զարյանս, ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) դիմումների և քաղաքացիների ընդունելության բաժնում որպես փորձագետ աշխատելու ընթացքում իրականացրել եմ հետևյալ գործառույթները.

1. Իրականացրել եմ ինձ մակագրված դիմումների և բողոքների համալիր ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ «Պետական վերահսկողական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակում վերջիններս հասցեագրել եմ իրավասու պետական կառավարման համակարգի մարմիններ, վերահսկել դրանց ընթացքը և ստացված պատասխանների ու պարզաբանումների հիման վրա պատասխանել դիմումատուներին:
2. Հեռախոսազանգի միջոցով պատասխանել եմ քաղաքացիների՝ Ծառայություն դիմում ներկայացնելու ընթացակարգի, մուտքագրված դիմումների և վերջիններիս ընթացքի մասին հարցադրումներին, անհրաժեշտության դեպքում տրամադրել եմ նաև այլ տեղեկատվություն:
3. Իրականացրել եմ Ծառայություն ներկայացած քաղաքացիների ընդունելություն, վերջիններիս բողոքների, դիմումների, առաջարկությունների և հնչեցրած հարցերի քննարկում, դիմումի հետագա ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու ցանկի տրամադրում:
4. Կատարել եմ անմիջական ղեկավարի կողմից տրված այլ հանձնարարություններ:

**ՀՀ պետական վերահսկողական ծառայության**
**Դիմումների և քաղաքացիների ընդունելության**
**բաժնի փորձագետ՝**

**Արմինե Զարյան**

**«06» դեկտեմբերի 2023թ.**